Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՄՈՆՈՒՄԵՆՏ-ՔԱՆԴԱԿԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄՈՆՈՒՄԵՆՏԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Դարերի տառապանքներից ազատագրված և ազգային վերածնունդն ապրող հայ ժողովուրդն իր երախտագիտության խորը զգացումն է արտահայտում ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինին, այն իմաստուն մարդուն, որը փրկեց նրան կործանման վիհից և լայն ճանապարհ բաց արեց դեպի երջանիկ կյանք։ Ժողովուրդների հանճարեղ Առաջնորդի նկատմամբ հայ ժողովրդի տածած երախտագիտական զգացմունքների արտահայտությունն է հանդիսանում Երևան քաղաքում, Քանաքեռի սարալանջին կառուցված մոնումենտը, որի բացումը տեղի ունեցավ նոյեմբերի 29-ի ցերեկվա ժամը 3-ին։

Այդ օրը մարդկային շարքերի անվերջ հոսանքը, ցնծության և բերկրանքի անհուն ալիքումը սրտերում, մայրաքաղաքի ասֆալտած պողոտաներով, բարձրանում է դեպի վեր, դեպի Քանաքեռ տանող բարձունքը։

Մոնումենտի պատվանդանի շուրջը հավաքվում են մայրաքաղաքի և շրջանների բազմահազար հայ աշխատավորները, այն մարդիկ, որոնք վերափոխել են իրենց հարազատ երկիրը, բարձրացրել են նրա գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, կուլտուրան և արվեստը, և այսօր բաց ճակատով եկել են ներկա գտնվելու մեծ Առաջնորդի մոնումենտի բացմանը։

Ցերեկվա ժամը 3-ին ամբիոն են բարձրանում հայրենի կառավարության ղեկավարները, գիտության, գրականության, տնտեսության և այլ ասպարեզների անվանի մարդիկ։

Երևանի քաղաքային սովետի նախագահ Ե. Վարդանյանը բաց է անում միտինգը և ձայն տալիս Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի քարտուղար Գ. Ա. Հարությունյանին, որը հայ ժողովրդի երախտագիտական զգացումներն է հայտնում Առաջնորդի նկատմամբ և նշում է պատմական այն մեծ ու անգնահատելի դերը, որ կատարել է նա հայ ժողովրդի ազատագրության և նրա երջանիկ, խաղաղ ու ապահով կյանքի համար։

Այնուհետև պետական հիմնի հնչյունների տակ ռեսպուբլիկայի աշխատավորների ներկայացուցիչների պատգամավորությունը, կազմված ութ հոգուց, բաց է անում երախտագետ հայ ժողովրդի կառուցած հոյակապ մոնումենտը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեկտեմբերի 24-ին տեղի ունեցան Հայկական ՍՍՌ տեղական՝ շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային սովետների ընտրությունները։

Տեղական սովետների դեպուտատության թեկնածուներն առաջադրվել էին, ըստ տեղական սովետների ընտրությունների կանոնադրության 59-րդ հոդվածի, «Հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների՝ կոմունիստական պարտիական կազմակերպությունների, պրոֆեսիոնալ միությունների, կոոպերատիվ կազմակերպությունների, երիտասարդության կազմակերպությունների և կուլտուրական ընկերությունների» կողմից։

Ընտրություններն ամենուրեք անցկացան խանդավառ իրադրության մեջ։ Ժողովուրդը միահամուռ կերպով իր ձայնը տվեց իր իսկ առաջադրած լավագույն որդիներին ու դուստրերին՝ գիտության, արվեստների, արդյունաբերության, գյուղատնտեսության և աշխատանքի այլևայլ բնավագառների առաջադեմ մարտիկներին, նորարարներին ու ստախանովականներին։

Ռեսպուբլիկայի 12,009 ընտրական օկրուգներում ընտրվեցին տեղական սովետների դեպուտատներ։ Ընտրական կենտրոնական հանձնախմբի հաղորդագրության պաշտոնական վերջնական տվյալների համաձայն ընտրություններին մասնակցեց ընտրական ցուցակներում գրանցված ընտրողների 99,99 տոկոսը, որից 99,88 տոկոսը ձայն տվեց առաջադրված թեկնածուների օգտին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Նոյեմբերի 22-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ ընդհանուր ժողով, նվիրված Սովետական Հայաստանի 30-ամյակին։ Ժողովում լսվեց Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի զեկուցումը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 1949—1950 թվականների գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների և Ակադեմիայի առաջիկա խնդիրների մասին։

Համբարձումյանը նշեց Ակադեմիայի հսկայական նշանակությունը Սովետական Հայաստանում գիտական մտքի զարգացման համար, որպես փաստ մատնացույց անելով կադրերի աճը. եթե 1935 թվականին Արմֆանում (ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալում) աշխատում էին ընդամենը 58 գիտական աշխատող, ապա այժմ Ակադեմիայում աշխատում են 742 գիտական աշխատող, այդ թվում գիտությունների 77 դոկտոր-պրոֆեսոր և գիտությունների 198 թեկնածու։ Ակադեմիայի գիտական հիմնարկների թիվը հասել է 35-ի։

Անցնելով 1949—1950 թվականների գիտական աշխատանքների հանրագումարին, Համբարձումյանն առանձնապես շեշտում է Ակադեմիայի ֆիզիկո-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի, Բյուրականի աստղադիտարանի աշխատանքների, Քիմիական, Բիոլոգիական և մի շարք այլ ինստիտուտների և առանձին գիտական աշխատողների հաջողությունները։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Սույն թվի նոյեմբերի 28-ին Հանրային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի գիտական սեսիան՝ նվիրված Սովետական Հայաստանի 30-ամյա հոբելյանին։

Սեսիան բաց արեց Մատենադարանի դիրեկտոր պրոֆ. Գ. Աբովը՝ նշելով այն մեծ հաջողությունները, որոնք ձեռք են բերել սովետահայ պատմագիտությունն ու գրականագիտությունը 30 տարիների ընթացքում և Մատենադարանի համեստ մուծումներն այդ մարզերում։

«Նորահայտ վավերագրեր Դավիթ-Բեկի և հայ-ադրբեջանական 1724 թվին կնքված դաշնադրության մասին» թեմայով հանդես եկավ պրոֆ.-դոկտ. Ա. Աբրահամյանը՝ հրապարակելով նորահայտ մի շարք վավերագրեր, որոնք մեծ արժեք ունեն Դավիթ-Բեկի մղած ազատագրական շարժման և հայ-ադրբեջանական դրացի ժողովուրդների համատեղ պայքարի պատմության համար։

Հաջորդ զեկուցումը կարդաց պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը՝ «Մանրանկարները որպես պատմական աղբյուր՝ արհեստների և կենցաղի ուսումնասիրության» թեմայով։ Զեկուցողը ձեռագրերից քաղված կոնկրետ օրինակներով ցույց տվեց, որ հայկական մանրանկարչությունը արժեքավոր նյութեր է պարունակում անլայալի արտադրական միջոցները ուսումնասիրելու համար։

Այնուհետև հանդես եկան Մատենադարանի աշխատակիցներ՝ Շ. Նազարյանը՝ «Գաբրիել Պատկանյանի «Վարդնամակ» վիպակը», Վ. Խեչումյանը՝ «10-րդ դարի հայ մանրանկարչության մի դպրոցի մասին», Ս. Լալաֆարյանը՝ Տաթևի կալվածներն ըստ № 1488 ձեռագրի» և Ա. Մնացականյանը՝ «Հայրենասիրական-սոցիալական մոտիվները 10—14-րդ դարերի հայ անտիպ բանաստեղծություններում» թեմաներով։

Զեկուցումները պարունակում էին գիտական արժեքավոր նորություններ և բարձր գնահատության արժանացան սեսիային ներկա գտնվող հասարակության կողմից։

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ Պ. ՊՈՌՇՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

Էջմիածնում բացվեց հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանը։ Տուն-թանգարանում դրված են մեծ բանաստեղծի կյանքն ու գրական հասարակական գործունեությունը պատկերող լուսանկարներ, գրքեր, տնային գործածության իրեր։

Աշտարակի շրջկենտրոնում, հիմնական նորոգումից հետո, բացվեց հայ վիպագրության կլասիկներից մեկի՝ Պերճ Պռոշյանի տուն-թանգարանը, որը վերջերս ձեռք է բերել նոր, հարուստ էքսպոնատներ։

ԳՐՔԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելու 30-ամյակի առթիվ Հայպետհրատը Գրքի պալատում կազմակերպել է գրքի մեծ ցուցահանդես, ցուցադրելով գրքի հրատարակման գործում մեր ռեսպուբլիկայի ունեցած նվաճումները։

Ցուցահանդեսի նյութերից երևում է, որ գրքի հրատարակման գործը զարգացել է աննախընթաց չափերով։ Այսպես, եթե 1921—1930 թ. թ. Հայպետհրատը հրատարակել է 1,419 անուն գիրք՝ 6,453,000 տիրաժով, ապա 1941—1950 թ. թ. 4,123 անուն գիրք՝ 26,502,000 տիրաժով։



Խաչատուր Աբովյանի նորաբաց արձանը Աբովյանի անվան պուրակում

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Երևանի Աբովյան փողոցի վերին ծայրում, Քանաքեռ տանող ճանապարհի վրա, Գեղարվեստական ինստիտուտի ճիշտ դիմաց, գտնվում է Աբովյանի անվան պարկը։ Սովետական Հայաստանի 30-ամյակի օրն այստեղ բացվեց Խաչատուր Աբովյանի գեղեցիկ արձանը։

Քաղաքի բարձրադիր այդ վայրից մեծ հայրենասերը կարծես հպարտ նայում է իր Հայրենիքի վերակառուցումներին և սքանչանում նրա վերելքով։

Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի նորաբաց կիսանդրին մանկական այգում

ՕԴԱՉՈՒ ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայրաքաղաքի կենդրոնական մանկական գեղեցիկ պարկում, ծառերի և ծաղիկների մեջ, բացվել է Սովետական Միության կրկնակի հերոս օդաչու Նելսոն Ստեփանյանի կիսանդրին։

Նելսոն Ստեփանյանի, հայ ժողովրդի այս հերոս զավակի սխրագործությունների հեռ ծանոթ է ողջ աշխարհը։ Նա չխնայեց իր կյանքը Հայրենիքի պաշտպանության համար և ընկավ հերոսական մահով։

Հայրենիքը երբեք չի մոռանա իր քաջ հայրենասերին։

Ջերմուկի ջրվեժը

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԸ

Ջերմուկը գտնվում է Ազիզբեկովի շրջանի Կեչուտ գյուղի մոտ (պատմական Վայոց Ձորում)։ Նրա տաք ջրերը օգտագործվել են շատ վաղուց, դեռևս 13-րդ դարում։ Այդ մասին տեղեկություններ կան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մոտ։ Դարեր շարունակ, ամռան ամիսներին, հարևան Սյունիքից և այլ վայրերից հազարավոր հիվանդներ բերել են այստեղ, վրաններ խփել, լողացրել առանձին փոսերում լցվող տաք ջրերում, և հրաշքներ են հյուսվել այդ ջրերի բուժիչ հատկության մասին։ Ջերմուկը Օրբելյանների ամառանոցն է եղել։

Սովետական տարիներին բացառիկ ուշադրություն դարձվեց Ջերմուկի վրա։ Մասնագետ գիտնականների հատուկ խմբեր զբաղվեցին Ջերմուկի ջրերի բուժիչ հատկության ուսումնասիրությամբ։ Պարզվեց, որ Ջերմուկի ջրերն իրենց բաղադրությամբ նման են չեխոսլովակյան Կարլսբատի ջրերին և ունեն

համաշխարհային նշանակություն։ Այդ ջրերը բուժում են տասնյակ տեսակից ավելի հիվանդություններ։ Հիվանդները բուժվում են լողանալով և ջուրը խմելով։

Հայաստանի կառավարությունը որոշել է Ջերմուկը դարձնել առաջնակարգ սանատորիա։ Դալարագյազի լեռնային բնության միջով անց է կացվել խճուղի դեպի Ջերմուկ։ Կառուցվել են սանատորիայի և լողարանների առաջին երկհարկանի շենքերը։ Ջերմուկի հանքային ջուրն այժմ շշերի մեջ են լցնում և օգտագործում խմելու համար։ Կառավարության որոշմամբ 1951 թվին մեծ շինարարություն է ծավալվելու Ջերմուկում։

Ջերմուկը որպես սանատորիա աչքի է ընկնում ոչ միայն իր բուժիչ հանքային տաք ջրերով, այլև սառնորակ աղբյուրներով, իր անտառներով, իր նարզանի ջրերով, Արփա գետի իր կարմրախայտ ձկներով և իր ջրվեժով, որը, կարծես, Ջերմուկի թագն ու պսակն է։

ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՕՐՅԱԿԸ

Նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 4-ը Երևանում տեղի ունեցավ արվեստի աշխատողների ստեղծագործական հաշվետվության տասնօրյակ՝ նվիրված Սովետական Հայաստանի 30-ամյա հոբելյանին, ուր արվեստի աշխատողները հանդես եկան խոշոր, ծավալուն գործերով։

Տասնօրյակի համերգները ցույց տվին, որ ավագ կոմպոզիտորների կողքին աճում է շնորհալի կադրերի մի նոր սերունդ։ Երիտասարդ հեղինակների ստեղծագործություններից բարձր գնահատականների արժանացան Լ. Սարյանի «Սիմֆոնիկ պոեմ»ը, կոմպոզիտոր Գր. Եղիազարյանի «Արմինե» բալետից կատարած հատվածները, Է. Հովհաննիսյանի «Խաղաղություն աշխարհին» և Է. Բաղդասարյանի «Սիմֆոնիկ պոեմ»ը։

Տասնօրյակի օրերին Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնը բեմադրեց Հ. Ստեփանյանի «Հերոսուհին» և Ա. Տիգրանյանի «Դավիթ-Բեկ» նոր օպերաները։

«ԴԱՎԻԹ-ԲԵԿ» ՕՊԵՐԱՅԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ

Բոլոր տարիքի և բոլոր պրոֆեսիաների տեր մարդիկ անհամբեր սպասում էին «Դավիթ-Բեկ» օպերային։ Դահլիճը ծայրից ծայր լիքն է երաժշտական հասարակությամբ։ Բոլորին հետաքրքրում է մի հարց— ինչպիսի՞ն է լինելու հայկական ամենաժողովրդական «Անուշ» օպերայի հեղինակի երկրորդ ստեղծագործությունը։ Դահլիճում, կատարյալ լռության մեջ, հանկարծ հնչում են նվագախմբի հերոսական հնչյունները, որոնք ունկնդրին տրամադրում են մտքով փոխադրվել պատմական այն ժամանակաշրջանը, երբ տեղի են ունենալու օպերայում նկարագրված իրադարձությունները։

Բացվում է վարագույրը։ Առաջին իսկ արիան արժանանում է ունկնդիրների բուռն ծափահարությանը։ Օպերան հարուստ է հիանալի արիաներով, խմբերգներով, մասսայական տեսարաններով ու պարերով։ Կանանց լիրիկական խմբերգներին հաջորդում են տղամարդկանց մարտական խմբերգները, և քնքուշ, հեզանուշ պարերին՝ տղամարդկանց կրակոտ, ռազմաշունչ պարերը։ Ա. Տիգրանյանը հայկական ժողովրդական երգն ու պարը այնպես է ձուլել օպերային, որ դժվար է ասել՝ թե որտե՞ղ է վերջանում ժողովրդականը և որտե՞ղ է սկսվում հեղինակի ստեղծագործությունը։ Իր վարպետ մշակմամբ կոմպոզիտորը ժողովրդական երգն ու պարը հասցրել է նոր աստիճանի։

Օպերայի երաժշտական ղեկավարությունը և դիրիժորական աշխատանքը մեծ հաջողությամբ կատարել է ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ, դիրիժոր Գ. Բուդաղյանը։ Բեմադրությունը կատարել է վաստակավոր արտիստուհի Գ. Մելքումյանը, արտաքին ձևավորումը՝ Վ. Վարդանյանը, պարերի բեմադրությունը՝ վաստակավոր արտիստ Զ. Մուրադյանը, երգեցիկ խմբի ղեկավարությունը՝ Կ. Կարապետյանը։

Օպերայի գլխավոր դերերում հանդես եկան ժողովրդական արտիստ Շարա Տալյանը (Դավիթ-Բեկ), ժողովրդական արտիստուհի Տ. Սազանդարյանը (Թամար), վաստակավոր արտիստներ Ֆ. Օհանյանը (իշխան Շահումյան), Է. Խաչիկյանը (Շուշան), Ա. Պետրոսյանը (Սանթուր), Ս. Շախիջանյանը (Վախտանգ), ժողովրդական արտիստ Դ. Պողոսյանը (դավաճան Մելիք), Գ. Մարկոսյանը (պարսկական խան), Ս. Բարխուդարյանը (գզիր), և Ս. Կորժենյանը (Պետրոս առաջինի պատգամաբեր)։

Այն ջերմ ընդունելությունը, որին արժանացավ «Անուշ» օպերայի հեղինակի նոր ստեղծագործությունը, վկայում է, որ «Դավիթ-Բեկ» օպերան իր արժանի տեղը կգրավի հայկական լավագույն օպերաների՝ «Արշակ երկրորդ»ի, «Ալմաստ»ի և «Անուշ»ի շարքում։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ 30 ՏԱՐԻՆ

Սովետական Հայաստանի թատերական արվեստի 30 տարվա նվաճումներին է նվիրված Արվեստի տանը բացված ցուցահանդեսը, որ կազմակերպել է Հայաստանի Թատերական թանգարանը։ Հատուկ շրջանակված ցուցատախտակների վրա ձևավորված են բազմաթիվ լուսանկարներ։

Սունդուկյանի անվան Պետական թատրոնի բաժնում ցուցադրված են ռուս և արևմտյան կլասիկ դրամների, ժամանակակից սովետական պիեսների վերջին շրջանի լավագույն բեմադրությունների և դերակատարների լուսանկարները։

Արվեստի տան դահլիճի սյունաշարի վերջում շարքով տեղ են գրավել թատերական ասպարեզի անվանի արվեստագետների՝ ժողովրդական արտիստների, Ստալինյան մրցանակի լաուրեատների մեծադիր նկարները։

Ցուցահանդեսում մեծ տեղ են գրավում նաև Հայաստանի երաժշտական կուլտուրայի պարծանք՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի լավագույն բեմադրությունների ցուցատախտակները։

Իրենց լավագույն բեմադրություններով ներկայացված են Ստանիսլավսկու անվան Ռուսական, Միկոյանի անվան Պատանի հանդիսատեսի և Երաժշտական կոմեդիայի թատրոնները։

Լենինականի պետական թատրոնը ներկայացված է իր 13 բեմադրությունների լուսանկարներով։

Ցուցահանդեսում լայն տեղ է հատկացված ռեսպուբլիկայի գրեթե բոլոր շրջանային թատրոններին, նրանց բեմադրություններին ու դերասաններին։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ

Նոյեմբերի 26-ին Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ սովետահայ գրականության երեկո՝ նվիրված Սովետական Հայաստանի 30-ամյակին։ Նախագահում էր մեծանուն բանաստեղծ Ա. Իսահակյանը։ Զեկուցումով հանդես եկավ բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը, որը հանգամանորեն խոսելով 30 տարում ձեռք բերած նվաճումների մասին և վերլուծելով սովետահայ գրողների ստեղծագործական նոր հաջողությունները, նշեց նրանց հետագա անելիքների մասին։

Զեկուցումից հետո ելույթ ունեցավ անվանի գրող Մարիետտա Շահինյանը։ Նա Սովետական Միության գրողների անունից ջերմորեն ողջունեց Սովետական Հայաստանի 30 տարին։

Այնուհետև ջերմ ելույթներով և իրենց բանաստեղծությունների ընթերցումով հանդես եկան գրողներ՝ Դ. Դեմիրճյանը, Արազին, Ն. Զարյանը, Հ. Սիրասը, Հ. Քոչարը, Ա. Վշտունին, Հ. Շիրազը և երիտասարդ մի շարք բանաստեղծներ։

ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ Կ. ՍԻՏԱԼԻՆ

Դեկտեմբերի 15-ին Հայաստանի Սովետական գրողների միության դահլիճն էին հավաքվել Երևանի գրական հասարակության, արվեստի ու կուլտուրայի ներկայացուցիչներ, ուսանողներ, մանկավարժներ՝ ներկա գտնվելու ամերիկահայ առաջադիմ բանաստեղծ և հրապարակախոս Կարապետ Սիտալի ստեղծագործություններին նվիրված երեկոյին։ Երեկոն կազմակերպված էր Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության (ԱՕԿՍ) և Հայաստանի Սովետական գրողների միության կողմից։ Նիստը բացվեց Դ. Դեմիրճյանի ներածական խոսքով, որից հետո Կ. Սիտալի ստեղծագործական ուղու և նրա ստեղծագործության վերլուծմամբ հանդես եկավ Հ. Սիրասը։

Կ. Սիտալի ստեղծագործությունը և հասարակական գործունեությունը դրվատող խոսքերով հանդես եկան գրողներ Ն. Զարյանը, Հ. Քոչարը և «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր Պ. Սելյանը։

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ» ԲԱԶՄԱՏԻՐԱԺ ԹԵՐԹԸ

Նոյեմբերի 29-ին Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 30-րդ տարեդարձի օրը լույս տեսավ Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի բազմատիրաժ «Սովետական ուսանողություն» շաբաթաթերթի առաջին համարը։

Թերթը լուսաբանում է համալսարանի ուսանողական և հասարակական կյանքը, վեր է հանում համալսարանի աշխատանքի թերությունները և նպաստում ուսման ընթացքն ավելի հաջող կազմակերպելուն։

ԴՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս տարվա աշնան ամիսներին շարունակվեցին միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի պեղումները, որ ղեկավարում էր Պատմության թանգարանի դիրեկտոր, պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանը։

Պեղումների ընթացքում բացված հնագույն դամբարաններում (մեր թվարկությունից առաջ 2-րդ դար) գտնվել են բրոնզյա իրեր, կարասներ, կնիքներ, հռոմեական ժամանակաշրջանի հուլունքներ և թանկագին ակներով ականջօղեր։ Խոշոր արժեք են ներկայացնում մեր թվագրության 5-րդ դարին պատկանող խաչ-հուշարձանները, տեղական հախճապակուց պատրաստված սպիտակագույն ափսեները, բրոնզյա կանթեղները, ոսկյա ու ոսկրե իրերը և այլն։

Հայտնաբերվել են կավե խողովակներով պատրաստված ջրմուղի մնացորդները։ Հայտնաբերված են նաև Չինաստանից, Հնդկաստանից և Իրանից ներմուծված հախճապակյա իրեր։

Պեղումներից հայտնաբերված իրերը ցույց են տալիս, որ միջին դարերում Հայաստանում զարգացած են եղել մետաղագործությունը, զինագործությունը, բրուտագործությունը, մետաքսագործությունը և այլ արհեստներ։

ԻՆՔՆՈՒՍ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԸ

Արտաշես Պետրոսյանը ինքնուրույն կերպով է սովորել իր արվեստը։ Հայրենական պատերազմից վերադառնալով մեկ ձեռքը կորցրած, նա իր գլխավոր զբաղմունքը դարձրեց քանդակագործությունը, ստեղծելով արժեքավոր գեղարվեստական գործեր։ Դրանցից առանձնապես պետք է նշել «Կենաց բաժակ» բարելյեֆը։ Արարատի ֆոնի վրա, հովտում, կանգնած է կոլտնտեսուհի աղջիկը, շրջապատված խաղողի ողկույզներով և բաժակ է բարձրացրել ու առաջարկում է խմել ժողովուրդների մեծ Առաջնորդի կենացը, նրա 70-ամյակի առթիվ։

Ինքնուս քանդակագործի այս տարվա աշխատանքներից է «Հայ ժողովրդի ցնծությունը» բարելյեֆը, որը նվիրված է Սովետական Հայաստանի 30-ամյակին։ Նոր ճարտարապետական կոթողների ֆոնի վրա պատկերված է ժողովրդի խանդավառ երթը։